AMCA Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոն

E-AMCA
Արբիտրաժային գործերի կառավարման ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

AMCA արբիտրաժային գործերի կառավարման համակարգի



Գործերի կառավարման համակարգ
www.e-amca.am

E-AMCA
Արբիտրաժային գործերի կառավարման
ՀԱՄԱԿԱՐԳ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻՆՉՊԵ՞Ս ԳՐԱՆՑՎԵԼ ԵՎ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՐԲԻՏՐԱԺԻ ԵՎ ՀԱՇՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնը (AMCA) անկախ և մասնագիտացված հաստատություն է, որը տրամադրում է ծառայություններ վեճերի այլընտրանքային լուծման բնագավառում:

Կենտրոնի ծառայությունները ներառում են արբիտրաժը և հաշտարարությունը որպես վեճերի լուծման եղանակներ՝ ապահովելու համար արագ, արդյունավետ և ոչ ֆորմալացված կարգավորում առևտրային և օրենքով սահմանված այլ հարաբերություններից բխող վեճերի համատեքստում:

AMCA-ն համախմբում է բարձրակարգ մասնագետներ, որոնք ապահովում են վեճերի արդար և անկողմնակալ կարգավորում՝ պահպանելով գաղտնիության, ճկունության և կողմերի ինքնավարության անկյունաքարային սկզբունքները ողջ գործընթացի ընթացքում:

ԿԵՆՏՐՈՆԻ ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արբիտրաժը վեճերի լուծման մեխանիզմ է, որտեղ կողմերը համաձայնվում են իրենց վեճը փոխանցել **անկախ և չեզոք երրորդ անձանց՝ արբիտր(ներ)ին**, ովքեր կայացնում են պարտադիր կատարման ենթակա արբիտրաժային վճիռ:

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնում արբիտրաժային վարույթն իրականացվում է Կենտրոնի արբիտրաժային կանոնների հիման վրա՝ ընդհանուր և արագացված ընթացակարգերով:

Այն դեպքերում, երբ վարույթը վերաբերում է ՀՀ ԿԲ-ի կողմից տրամադրված լիցենզիա ունեցող անձանց, էներգետիկայի, ջրային և հեռահաղորդակցության ոլորտներում կարգավորվող գործունեություն իրականացնող անձանց և հաճախորդների միջև կնքված պայմանագրերից բխող գումարի բռնագանձման պահանջին, ու հայցապահանջի չափը չի գերազանցում 5 մլն ՀՀ դրամը, կիրառելի է նաև Կենտրոնի փոքր հայցագներով արբիտրաժային կանոնները:

E-AMCA
Արբիտրաժային գործերի կառավարման
ՀԱՄԱԿԱՐԳ

www.e-amca.am

Հայաստանում արբիտրաժային մշակույթի զարգացմանը նպաստելու, ինչպես նաև մեր հաճախորդների, արբիտրների, քարտուղարների և արբիտրաժային ծառայություններից օգտվող այլ անձանց հարմարավետության նպատակով Կենտրոնի կողմից ներդրվել է **Արբիտրաժային գործերի կառավարման («e-AMCA») էլեկտրոնային համակարգ**, որն ապահովում է արբիտրաժային վարույթի ողջ ընթացքը՝ արբիտրաժային պահանջի ներկայացումից մինչև վճռի հրապարակում և հարկադիր կատարման դիմումի ներկայացում, թվային, առցանց տարածությունում:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ԳՈՐԾԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱՆՑՈՒՄ

e-AMCA համակարգն ապահովում է վեճերի առցանց գրանցում, ինչը հնարավորություն է տալիս կողմերին ներկայացնել արբիտրաժ իրականացնելու պահանջը և պահանջին կից ներկայացվող փաստաթղթերն **առանց ֆիզիկական ներկայության**: Ի թիվս այլնի, այս հնարավորությունը նվազեցնում է թղթային փաստաթղթաշրջանառությունը, նվազեցնում լոգիստիկ ժամանակային վատնումներն ու նպաստում առավել բարվոք շրջակա միջավայր ունենալու գլոբալ ջանքերին:

2. ԹՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ և ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համակարգը հնարավորություն է տալիս վեճի կողմերին, արբիտրներին և քարտուղարություն իրականացնող սուբյեկտներին **հարմարավետորեն ներբեռնել, դիտարկել և կառավարել բոլոր փաստաթղթերը**: Այս գործառույթը ապահովում է թափանցիկություն և հեշտացնում է վեճի քննության ընթացքը:

3. ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Արբիտրաժային վարույթի շրջանակներում շատ կարևոր է ժամկետների պահպանումը: Համակարգը **ինքնաշխատ եղանակով հիշեցնում է բոլոր ժամկետները**, այդ թվում՝ միջնորդությունների ներկայացման, լսումների անցկացման, ՀԿԱԾ ուղարկելու հնարավորության հասանելիության և այլ վերաբերելի տեղեկություններ ժամկետների մասով:

4. ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ, ՎՃԻՌՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՎՍՏԱՀԵԼԻ ՀԱՐԹԱԿ

Արբիտրաժային վճիռները և ընթացակարգային մնացյալ որոշումները կարող են **թվայնացվել և պահպանվել համակարգում**, ինչը հեշտացնում է դրանց հետագա կիրառումը և վկայակոչումը: Մասնակիցները կարող են ցանկացած պահի մուտք գործել համակարգ և ծանոթանալ իրենց գործի ընթացքին ու վճռի բովանդակությանը:

5. ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Համակարգը հնարավորություն է տալիս **առցանց իրականացնել բոլոր վճարումները**՝ ներառյալ արբիտրաժային վճարները և այլ ծախսեր: Սա հեշտացնում է ֆինանսական հոսքերի կառավարումը և նվազեցնում այս գործընթացի առնչությամբ բյուրոկրատական խնդիրները:

ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Արագություն և արդյունավետություն

☑ Թվայնացված գործընթացները թույլ են տալիս կրճատել գործերի քննության միջին տևողությունը:

☑ Կողմերը կարող են ցանկացած պահի հետևել իրենց գործի ընթացքին:

Թափանցիկություն և վերահսկողություն

☑ Բոլոր փաստաթղթերը պահվում են կենտրոնացված և անվտանգ միջավայրում:

☑ Կողմերը կարող են վերահսկել արբիտրաժային գործընթացի բոլոր փուլերը:

Ապահովություն և գաղտնիություն

☑ Համակարգը ապահովում է տվյալների գաղտնիության բարձր մակարդակ՝ կոդավորման և անվտանգության նորագույն տեխնոլոգիաների շնորհիվ:

☑ Մուտքի հնարավորություն տրամադրվում է միայն լիազորված անձանց՝ խուսափելով չարտոնված օգտագործումից:

Ծախսերի նվազեցում

☑ Թղթային փաստաթղթերի անհրաժեշտությունը վերանում է:

☑ Կողմերը կարող են խուսափել լոգիստիկ ծախսերից և ժամանակային վատնումներից:

ՕԳՏԱՏԻՐՈՋ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ինչպե՞ս գրանցվել և մուտք գործել e-AMCA համակարգ



e-AMCA

ԱՐԲԻՏՐԱԺԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ
www.e-amca.am

ԻՆՉՊԵ՞Ս ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ e-AMCA ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԻՆՉՊԵ՞Ս ԳՐԱՆՑԵԼ ՕԳՏԱՀԱՇԻՎ

1. ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ e-AMCA

Արբիտրաժի և հաշտարարության հայաստանյան կենտրոնի արբիտրաժային գործերի կառավարման էլեկտրոնային համակարգ (e-AMCA) մուտք գործելու համար անհրաժեշտ է ցանկացած որոնողական համակարգի որոնման դաշտում մուտքագրել հետևյալ ենթատիրույթային անվանումը կամ պարզապես անցնել **հետևյալ հղումով**

www.e-amca.am

2. ԳՐԱՆՑԵԼ ՕԳՏԱՀԱՇԻՎ ԵՎ ԳԱՂՏՆԱԲԱՌԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Ենթատիրույթային անվանման ներմուծումից հետո տեսանելի կդառնա համակարգի մուտքային պորտալը՝ հետևյալ տեսքով.



Եթե ունեք արդեն իսկ գոյություն ունեցող մուտքանուն և գաղտնաբառ, պարզապես հավաքեք դրանք համապատասխան դաշտերում:

Եթե մոռացել եք գաղտնաբառը՝ սեղմեք մուտք գործելու դաշտի ստորին մասի ձախ անկյունում տեղակայված Մոռացել ե՞ք գաղտնաբառը հրամանի վրա:

Համակարգը հնարավորություն է տալիս էլեկտրոնային փոստի միջոցով (որի միջոցով օգտահաշիվը գրանցվել է Համակարգում) վերականգնել գաղտնաբառը: Այս գործիքը կարելի է օգտագործել նաև գաղտնաբառը փոխելու ցանկության դեպքում:

Նոր օգտահաշիվ գրանցելու համար սեղմեք մուտք գործելու դաշտի ստորին մասի աջ անկյունում տեղակայված Գրանցվել հրամանի վրա:

Քայլերի հաջորդականությունը ներկայացված է ստորև.



Համապատասխան գործողությունների իրականացումից հետո գրանցվել ցանկացող օգտատերը լրացված էլեկտրոնային փոստի հասցեին ստանում է վերի-ֆիկացման ութ նիշից բաղկացած կոդ, որը անհրաժեշտ է մուտք անել գրանցման պատուհանի համապատասխան դաշտում:

Էլեկտրոնային փոստի հասցեն մուտքագրելուց հետո օգտատերը պետք է համաձայնություն տա նաև **Կենտրոնի գաղտնիության քաղաքականությանը** և **Համակարգի օգտագործման պայմանների** հետ:

Օգտատերն իր էլ. փոստի հասցեին ուղարկված նիշերը համակարգ մուտքագրելու համար ունի 300 վայրկյան ժամանակ, որից հետո վերիֆիկացիոն կոդը կդադարի գործել:

Հաստատման կոդը համակարգում ունի հետևյալ տեսքը.



Խնդիրների դեպքում նախքան Համակարգի տեխնիկական աջակցության թիմին դիմելը խնդրում ենք ստուգել նաև էլեկտրոնային փոստի **սպամերի բաժինը**:

Վերիֆիկացիայի կոդը բարեհաջող մուտքագրելու դեպքում Համակարգը թույլատրում է ստեղծել մուտքանուն և գաղտնաբառ:

4. ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵԼ ՀԱՄԱԿԱՐԳ ԵՎ ԱՆՑՆԵԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԻՖԻԿԱՑԻԱ

Մուտքանուն և գաղտնաբառ ստեղծելուց հետո համակարգը թույլ է տալիս մուտք գործել:

Արդյունքում հայտնվում է համակարգի հետևյալ պատուհանը (տե՛ս ստորև).



Համակարգում Ձեր գործառույթներն արդյունավետ իրականացնելու համար որպես նախնական վավերապայման անհրաժեշտ է **անցնել տվյալների նույնականացում**, որի ստուգումն իրականացվում է Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) կողմից:

Տվյալների նույնականացում կատարելու համար անհրաժեշտ է հետևել համակարգի թելադրող հրահանգին, որը երևում է գլխավոր պատուհանի վերին հատվածամասում և ունի հետևյալ տեսքը (տե՛ս ստորև):

«Շարունակել» հրահանգին հետևելով բացում է համապատասխան նույնականացնող պատուհան, որտեղ անհրաժեշտ է ճշգրտությամբ լրացնել Ձեր անձնական տվյալները: Սույն տվյալների պահպանումն իրականացվում է Համակարգի գաղտնիության քաղաքականության և Համակարգի օգտագործման պայմանների համապատասխան:



Նույնականացման պորտալը պահանջում է նոր գրանցված օգտատիրոջից լրացնել.

- Ռեզիդենտությանը վերաբերող տեղեկություն՝ ՀՀ ռեզիդենտ հարցադրմանը պատասխանելով «Այո» կամ «Ոչ» այլընտրանքային պատասխաններից մեկը:
- Կարգավիճակի ընտրություն՝ «Ֆիզիկական անձ» և «Իրավաբանական անձ» ընտրանքներից:
- Լրացնել հայատառ անուն, ազգանուն, հայրանուն՝ ինչպես նշված է անձը հաստատող փաստաթղթում, որը ստացել եք որևէ իրավասու մարմնի կողմից:
- Հասցե՝ [ԵՐԿԻՐ / ՄԱՐԶ / ՀԱՄԱՅՆՔ / ԲՆԱԿԱՎԱՅՐ / ՓՈՂՈՑ / Տ/Բ] ձևաչափով:



- Անհրաժեշտ է մուտքագրել նաև փոստային դասիչը, որը կարելի է գտնել Հայաստանի փոստի haypost.am կայքի համապատասխան գործիքի միջոցով:
- Հեռախոսահամար՝ հավաքելով նաև համապատասխան երկրի կոդը (օրինակ՝ Հայաստանում գրանցված հեռախոսահամարների պարագայում՝ «+374» կոդով):

Պահանջվող տվյալների ամբողջական մուտքագրումից հետո տվյալները փոխանցվում են Կենտրոնին: Մուտքագրումից հետո անձնական տվյալներն անցնում են նույնականացում Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակի (ԷԿԵՆԳ) միջոցով:

Տվյալների համապատասխանության դեպքում օգտահաշիվն ակտիվանում է: